



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԱԽ-12-Ո-13  
2017թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ, ԶՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԶՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՐՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝ Ա. Սյրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝ Ա. Բաբայանի, Ռ. Բարսեղյանի,  
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,  
Մ. Հարթենյանի, Գ. Ղազինյանի,  
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,  
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

*քարտուղարությամբ՝ Շ. Վարդանյանի*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի երրորդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Սահմանել դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, քննության և Արդարադատության խորհրդում հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգը, Արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների վերաբերյալ հարցումների իրականացման կարգը, հարցման շրջանակում ընդգրկված մարմինների ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումը հրապարակել դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**  
15 սեպտեմբերի 2017թ.  
ք. Երևան

**Կ Ա Ր Գ**  
**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**  
**ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ, ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ**  
**ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ, ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ**  
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ**  
**ԱՆՑԿԱՑՄԱՆ**

**I. Դատավորների թեկնածությունների ցուցակի**  
**համալրման նպատակով հայտերի ընդունումը, անցկացվող**  
**որակավորման ստուգման գրավոր քննության ձևը և քննական հարցերի կառուցվածքի և**  
**բովանդակության նվազագույն պահանջները**

1. Հավակնորդը հայտում նշում է, թե դատավորների թեկնածությունների ցուցակի որ մասնագիտացմամբ /քաղաքացիական կամ քրեական/ որակավորման ստուգմանն է մասնակցելու:

2. Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննությունը /այսուհետ՝ Քննություն/ անցկացվում է համապատասխանաբար քաղաքացիական և քրեական մասնագիտացման ոլորտներում թեստերի միջոցով, որոնք պարունակում են իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով: Թեստերը կարող են պարունակել նաև բազմակի ընտրության հարցեր:

3. Քաղաքացիական և քրեական մասնագիտացման ոլորտներում թեստերը պետք է կազմվեն առնվազն 3 տարբերակներով: Այն դեպքում, երբ թեստերը պարունակելու են նաև բազմակի ընտրության հարցեր, ապա թեստի անցկացման համար նախատեսված հարցերի ընդհանուր քանակը, որից կատարվում է հարցերի ընտրությունը, պետք է առնվազն կրկնակի գերազանցի մեկ թեստի համար նախատեսված հարցերի քանակը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի կողմից քննական հարցերի մշակման համար ընտրված համապատասխան մասնագետի (մասնագետների) կամ մասնագիտացված կազմակերպության կազմած թեստերը վերջինիս կողմից

քննության օրը քննասենյակում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ ղեկավարին:

## **II. Քննության կազմակերպման և անցկացման կարգը**

4. Որակավորման ստուգմանը մասնակցելու պահանջները բավարարող հայտ ներկայացրած հավակնորդներին Աշխատակազմը տրամադրում է վկայական /այսուհետ՝ Վկայական/:

Վկայականը ներառում է «ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմ» անվանումը, հավակնորդի անուն-ազգանունը, լուսանկարը, Վկայականի համարը, որակավորման ստուգման անցկացման վայրի, օրվա և որակավորման ստուգման ներկայանալու ժամի մասին նշումը: Վկայականը ստորագրում է Աշխատակազմի ղեկավարը, այն կնքվում է Աշխատակազմի կնիքով:

5. Յուրաքանչյուր հավակնորդ ներկայանում է Քննության անցկացման վայր անձնագրով և Վկայականով:

Անձնագիր և Վկայական չներկայացրած, ինչպես նաև նշանակված ժամից ուշացած հավակնորդի մուտքը քննասենյակ արգելվում է:

6. Հավակնորդներին թույլատրվում է քննությանը ներկայանալ միայն հետևյալ նորմատիվ ակտերով.

ա) քաղաքացիական մասնագիտացման հավակնորդներ - ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք,

բ) քրեական մասնագիտացման հավակնորդներ - ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:

Քննության ժամանակ հավակնորդին կարող են տրամադրվել հանձնարարվող խնդիրների փաստական հանգամանքների վերաբերյալ նյութեր, ինչպես նաև խնդրի լուծման համար անհրաժեշտ տեսական գրականություն և իրավական ակտեր, որոնց շրջանակը որոշում է (են) Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի կողմից ընտրված քննական հարցերը մշակած համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը:

7. Հավակնորդին արգելվում է իր հետ քննասենյակ տանել համակարգիչներ, այլ էլեկտրոնային սարքավորումներ:

8. Քննության տևողությունը 6 ժամ է:

9. Քննասենյակում յուրաքանչյուր հավակնորդ գրադեցնում է առանձին գրասեղան: Քննության ընթացքում հավակնորդների շփումը միմյանց հետ արգելվում է: Քննասենյակից հավակնորդը կարող է դուրս գալ միայն Աշխատակազմի ներկայացուցչի

թույլտվությամբ: Հավակնորդը չի կարող քննության ընթացքում որևէ նյութ քննասենյակից հանել կամ քննասենյակ մտցնել:

10. Մինչև Քննության սկիզբը յուրաքանչյուր հավակնորդ ստանում է իր անվամբ և Վկայականի համարով ծրար, որը պարունակում է՝

- ա) համապատասխան թեստը,
- բ) Աշխատակազմի կնիքով դրոշմված թղթեր,
- գ) գրիչ:

11. Քննասենյակում քննությունների ընթացքը կազմակերպում են Աշխատակազմի ղեկավարը և նրա կողմից լիազորված Աշխատակազմի ներկայացուցիչները, որոնք կրում են տարբերանշան: Քննասենյակում ներկա կարող են լինել և դրանց ընթացքին հետևել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի 1 ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի նշանակած 1 ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նշանակած մինչև 3 փաստաբան և որակավորման ստուգման անցկացումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ համապատասխան հայտ ներկայացրած՝ իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև հինգ ներկայացուցիչ՝ ըստ դիմումների ներկայացման առաջնահերթության: Չլիազորված անձանց մուտքը քննասենյակ արգելվում է:

Քննասենյակում ներկա է (են) գտնվում Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի անդամը (անդամները):

12. Քննության ողջ ընթացքը տեսաձայնագրվում է Աշխատակազմի կողմից:

13. Քննական աշխատանքները պետք է գրվեն հատկացված գրիչներով, դրոշմված թղթերի վրա: Արգելվում է կատարել որևէ նշում, որը կարող է անհատականացնել գրավոր աշխատանքը:

14. Քննական աշխատանքն ավարտելուց հետո հավակնորդն Աշխատակազմի ներկայացուցչին հանձնում է աշխատանքը և ծրարը: Աշխատակազմի ներկայացուցիչը, ծրարի վրա նշելով գրված թերթերի քանակը, փակում է ծրարը, ինչից հետո ծրարի վրա ստորագրում են Աշխատակազմի ներկայացուցիչը և հավակնորդը: Քննության ավարտից հետո գրավոր աշխատանքների ծրարները հանձնվում են Աշխատակազմի ղեկավարին՝ ծածկագրման աշխատանքները կազմակերպելու և որակավորման ստուգման գրավոր աշխատանքների ստուգման և գնահատման նպատակով գնահատման հանձնաժողովին փոխանցելու համար:

15. Հավակնորդի կողմից սույն կարգի խախտում թույլ տալու դեպքում Աշխատակազմի ներկայացուցիչը կազմում է արձանագրություն, որն Աշխատակազմի

ղեկավարի կողմից ներկայացվում է քննասենյակում ներկա գտնվող Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի անդամին (անդամներին)` հավակնորդին քննասենյակից հեռացնելու հարցը լուծելու համար:

**III. Գատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գնահատման չափորոշիչները և քննական աշխատանքների ստուգման կարգը**

16. Գատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգումների քննական աշխատանքների ստուգման և գնահատման համար քննության անցկացումից ոչ շուտ, քան 4 օր առաջ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդն առաջարկում է իրավունքի համապատասխան բնագավառի 10 դատավորի թեկնածություն, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը` իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն 4 իրավաբան գիտնականի թեկնածություն` առաջարկված թեկնածուների համաձայնությամբ: Որակավորման գրավոր քննության անցկացման օրը` քննության ավարտից անմիջապես հետո, նշված դատավորներից և իրավաբան գիտնականներից վիճակահանությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի կողմից ընտրվում են գնահատման հանձնաժողովի անդամներ: Գնահատման հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի անդամները և դատարանների նախագահները:

17. Գնահատման հանձնաժողովը բաղկացած է իրավունքի համապատասխան բնագավառի հինգ դատավորներից և նույն բնագավառի երկու իրավաբան գիտնականներից: Գնահատման հանձնաժողովը ղեկավարում է իր կազմից անդամների ձայների մեծամասնությամբ ընտրված անձը: Գնահատման հանձնաժողովի անդամը պարտավոր է համապատասխանաբար իր թեկնածությունն առաջադրած Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդին կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդին անհապաղ գրավոր հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել որակավորման ստուգմանն իր մասնակցության անկողմնակալության վերաբերյալ:

18. Գրավոր աշխատանքների ստուգումն իրականացնում են գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված երկու ստուգողներ, որոնցից մեկը պետք է լինի դատավոր, իսկ մյուսը` իրավաբան գիտնական:

19. Եթե վերը նշված ստուգման արդյունքներով ստուգողների նշանակած միավորներում առկա է քսան տոկոսից ավելի շեղում, նշանակվում է լրացուցիչ ստուգում, որին մասնակցում են գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված համապատասխանաբար մեկ այլ դատավոր և մյուս իրավաբան գիտնականը:

20. Հավակնորդների գրավոր աշխատանքները գնահատման հանձնաժողովին տրամադրվում են անանուն:

21. Գրավոր աշխատանքների ստուգման և գնահատման համար գնահատման հանձնաժողովն Աշխատակազմի կողմից ապահովվում է ստուգումն ուղղորդող տիպային պատասխաններով: Տիպային պատասխաններն Աշխատակազմին տրամադրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի կողմից ընտրված քննական հարցերը մշակած համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը:

22. Գնահատման հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է գաղտնի և դրնփակ ընթացակարգով: Գնահատման հանձնաժողովի աշխատանքային պայմաններն ապահովում է Աշխատակազմը:

23. Գնահատման հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հավակնորդի գրավոր աշխատանքը ստուգելիս և գնահատելիս ղեկավարվում է հետևյալ չափորոշիչներով՝ հավակնորդի իրավական գիտելիքներ, վերլուծական միտք, բարդ տեքստերի համակարգված, արագ ըմբռնման կարողություններ, իրավաբանական գրավոր խոսքի սահունություն:

24. Ստուգված գրավոր աշխատանքը պետք է պարունակի դրանցում առկա թերությունների վերաբերյալ ստուգողների կատարած համապատասխան նշումներ, որոնք հնարավորություն կտան եզրահանգումներ անելու գնահատման հիմքում ընկած հանգամանքների մասին:

25. Գնահատման հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ծանոթանալու ստուգված գրավոր աշխատանքին և ներկայացնելու իր նկատառումները:

26. Գրավոր աշխատանքը գնահատվում է առավելագույնը 100 միավոր:

Թեստում պարունակվող իրավական խնդիրներում ներկայացված յուրաքանչյուր հանգամանք վեր հանելու, վերլուծելու և իրավական որակում տալու համար տրվում է համապատասխան միավոր՝ կախված հանգամանքների բարդությունից:

Գրավոր աշխատանքը գնահատվում է զրո միավոր, եթե այն ներկայացվել է առանց դրոշմի թղթերի վրա, այլ գրիչով գրված, հավակնորդների անվամբ, ազգանվամբ կամ ստորագրությամբ, ինչպես նաև անհատականացնող այլ նշումներով:

27. Գրավոր քննության արդյունքները հրապարակվում են արդյունքների ամփոփումից հետո անհապաղ հրապարակային ծանուցումների պաշտոնական

ինտերնետային կայքում /www.azdarar.am/ և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում /www.court.am, «Նորություններ» բաժնում/:

28. Արդյունքների հրապարակումից հետո հավակնորդի պահանջով անհապաղ, բայց ոչ ուշ, քան մինչև դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող օրը, տրամադրվում է իր գրավոր աշխատանքի պատճենը՝ դրանում առկա թերությունների վերաբերյալ ստուգողների կատարած համապատասխան նշումներով:

29. Գրավոր աշխատանքի պատճենը ստանալուց հետո հավակնորդը կարող է բողոքարկել Զննության ընթացակարգը կամ գնահատականը՝ նշելով բողոքի հիմքում ընկած հանգամանքները և իր հիմնավորումները:

30. Գրավոր աշխատանքի գնահատման արդյունքը կարող է բողոքարկվել գնահատման հանձնաժողովի որոշման հրապարակման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկման դիմումը հանձնվում է Աշխատակազմի ղեկավարին:

31. Բողոքարկման դիմումներով և գրավոր աշխատանքներով ծրարները հանձնվում են Աշխատակազմի ղեկավարին՝ ծածկագրման աշխատանքները կազմակերպելու և բողոքարկման հանձնաժողովին փոխանցելու համար:

32. Գրավոր քննության արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի և արդարադատության նախարարի առաջարկած իրավունքի համապատասխան բնագավառի թեկնածուներից վիճակահանությամբ ընտրվում է 2 դատավոր և 1 իրավաբան գիտնական անդամներից կազմված բողոքարկման հանձնաժողով, որի անդամներն իրենց կազմից ընտրում են նախագահողին: Բողոքարկման հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող ընդգրկվել գնահատման հանձնաժողովի անդամները, Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի անդամները և դատարանների նախագահները: Բողոքարկման հանձնաժողովի անդամը պարտավոր է համապատասխանաբար իր թեկնածությունը առաջադրած Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդին կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդին անհապաղ գրավոր հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել որակավորման ստուգմանն իր մասնակցության անկողմնակալության վերաբերյալ:

33. Հավակնորդի գրավոր աշխատանքը և բողոքը բողոքարկման հանձնաժողովին տրամադրվում են անանուն:

34. Բողոքարկման հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է գաղտնի և դրնփակ ընթացակարգով: Բողոքարկման հանձնաժողովի աշխատանքային պայմաններն ապահովում է Աշխատակազմը:

35. Բողոքարկման հանձնաժողովը գրավոր աշխատանքը վերստուգում է միայն բողոքարկման դիմումի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

36. Որակավորման գրավոր քննության արդյունքների հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են հավակնորդի բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

37. Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են: Գրանք անհապաղ հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում /[www.court.am](http://www.court.am), «Նորություններ» բաժնում/՝ նշելով սկզբնական և բողոքարկման արդյունքում ստացված միավորները:

38. Բողոքարկման հանձնաժողովի գնահատականը վերջնական է: Որակավորման գրավոր քննության արդյունքների հետ կապված բողոքարկման հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

#### **IV. Քննական աշխատանքների միավորների հաշվարկման կարգը և նվազագույն անցողիկ միավորը**

39. Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգումներին մասնակցող հավակնորդի վերջնական գնահատականը որոշում է գնահատման հանձնաժողովը՝ առնվազն 4 ձայնով ընդունված որոշմամբ: Գնահատման հանձնաժողովի որոշման մեջ նշվում են նաև երկու, իսկ լրացուցիչ ստուգում նշանակված լինելու դեպքում՝ չորս ստուգողների նշանակված գնահատականները:

40. Եթե գնահատման հանձնաժողովը անհրաժեշտ ձայներով որոշում չի կայացնում վերջնական գնահատականի վերաբերյալ, ապա այն որոշվում է համապատասխանաբար երկու, իսկ լրացուցիչ ստուգում նշանակված լինելու դեպքում՝ չորս ստուգողների նշանակված գնահատականների միջինով:

Հավակնորդի հանրագումարային միավորը հրապարակելիս հրապարակվում է նաև թեստում պարունակվող յուրաքանչյուր իրավական խնդրի համար ստացած գնահատականը: Այն դեպքում, երբ թեստերը պարունակելու են նաև բազմակի ընտրության հարցեր, ապա հրապարակվում են նաև այդ հարցերին տրված պատասխանների համար ստացված հանրագումարային գնահատականը:



41. Բողոքարկման դեպքում հավակնորդի վերջնական գնահատականը հաշվարկվում է բողոքարկման հանձնաժողովի կողմից:

42. Գրավոր քննության ընդհանուր արդյունքներով նվազագույն անցողիկ միավոր է համարվում դատավորների թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների թվաքանակը 50 տոկոսով, բայց ոչ պակաս, քան 5-ով գերազանցող թվաքանակի ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդներից վերջինի՝ բայց ոչ պակաս, քան 40 միավորը: Հավասար նվազագույն անցողիկ միավոր ունեցող հավակնորդների առկայության դեպքում բոլոր այդ հավակնորդներն ընդգրկվում են ցուցակում:

## **V. Արդարադատության խորհրդում հարցազրույցի կազմակերպումը**

43. Հարցազրույցին մասնակցելու իրավունք ստացած հավակնորդների ցուցակը Աշխատակազմի կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացնելու օրվան հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը հարցազրույցին մասնակցելու իրավունք ստացած հավակնորդներն անցնում են հոգեբանական թեստ՝ ուղղված պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը:

44. Հոգեբանական թեստի անցկացման օրը Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի կողմից ընտրված համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը իր (իրենց) կողմից մշակված հոգեբանական թեստը ներկայացնում է (են) Աշխատակազմ:

45. Հոգեբանական թեստ անցնող հավակնորդներին Աշխատակազմը տրամադրում է նոր վկայական, որը ներառում է «ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմ» անվանումը, հավակնորդի անուն-ազգանունը, լուսանկարը, հոգեբանական թեստի անցկացման վայրի, օրվա և ժամի մասին նշումը, ինչպես նաև վկայականի համարը: Վկայականը ստորագրում է Աշխատակազմի ղեկավարը, այն կնքվում է Աշխատակազմի կնիքով:

46. Հոգեբանական թեստ անցնող հավակնորդները ներկայանում են հոգեբանական թեստի անցկացման վայր անձնագրով և վկայականով:

Թեստավորմանն անձնագիր և վկայական չներկայացրած հավակնորդի մուտքը արգելվում է:

47. Հավակնորդին արգելվում է իր հետ թեստավորմանը տանել փաստաթղթեր, համակարգիչներ, այլ էլեկտրոնային սարքավորումներ:

48. Հարցազրույցին մասնակցելու իրավունք ստացած հավակնորդներին, որոնք անցել են հոգեբանական թեստը, Աշխատակազմը տրամադրում է նոր վկայական, որը ներառում է «ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմ» անվանումը, հավակնորդի անուն-ազգանունը, լուսանկարը, հարցազրույցի անցկացման վայրի, օրվա և ժամի մասին նշումը, ինչպես նաև վկայականի համարը: Վկայականը ստորագրում է Աշխատակազմի ղեկավարը, այն կնքվում է Աշխատակազմի կնիքով:

49. Հարցազրույցին մասնակցելու իրավունք ստացած հավակնորդները ներկայանում են Հարցազրույցի անցկացման վայր անձնագրով և վկայականով:

Անձնագիր և վկայական չներկայացրած հավակնորդի մուտքը հարցազրույցի արգելվում է:

50. Հավակնորդին արգելվում է իր հետ հարցազրույցի տանել փաստաթղթեր, համակարգիչներ, այլ էլեկտրոնային սարքավորումներ:

51. Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկուկես ժամ է:

52. Հարցազրույցի ընթացքը կազմակերպում են Աշխատակազմի ղեկավարը և նրա կողմից լիազորված Աշխատակազմի ներկայացուցիչները, որոնք կրում են տարբերանշան: Հարցազրույցին (բացառությամբ Խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման) ներկա կարող են լինել և դրանց ընթացքին՝ առանց հարցազրույցի գործընթացին միջամտելու, հետևել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի 1 ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի նշանակած 1 ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նշանակած մինչև 3 փաստաբան և որակավորման ստուգման անցկացումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ համապատասխան հայտ ներկայացրած՝ իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև հինգ ներկայացուցիչ՝ ըստ դիմումների ներկայացման առաջնահերթության: Չլիազորված անձանց մուտքը հարցազրույցի արգելվում է:

53. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդում հարցազրույցը ընթանում է ՀՀ դատական օրենսգրքի 116.1-րդ հոդվածով սահմանված կարգով:

54. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդում հարցազրույցի ողջ ընթացքը, բացառությամբ Խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման, տեսաձայնագրվում է Աշխատակազմի կողմից:

**ԿԱՐԳ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՀԱՐՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ  
ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ**

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի աշխատակազմը /այսուհետ՝ Աշխատակազմ/ Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների ցուցակի հրապարակման օրվան հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում գրավոր և բանավոր հարցումներ է կատարում հետևյալ հաստատություններ և վարչական մարմիններ.

- 1) հավակնորդի աշխատավայր
- 2) հավակնորդի հետ առնչված բարձրագույն ուսումնական հաստատություններ
- 3) հարկային մարմին:

2. Վերը նշված հաստատությունները և վարչական մարմինը համապատասխան հարցումը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում պարտավոր են հայցվող տեղեկատվությունը տրամադրել Աշխատակազմին:

ՀԱՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՁԵՎ

Հավակնորդի ազգանուն, անուն, հայրանուն	
Հարցման բովանդակությունը	Հարցման հասցեատիրոջ նկատառումները
1.	
2.	
3.	
4.	